ԿԱՖԱ ՔԱՂԱՔԻ ԱՆԿՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Վ. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

1475 թ. հունիսին թուրքական սուլթան Մահմեդ II-ի զորքերը հնգօրյա պաշարումից և հրետանային ռմբակոծությունից հետո գրավեցին Ջենովայի հանրապետության սևծովյան առևտրական գաղթավայրերի վարչական կենտրոն Կաֆա (այժմ Թեոդոսիա) քաղաքը[1]։ Դրանով էլ Ղրիմում սկիզբ դրվեց թուրքական տիրապետություն։ Կաֆայի անկումը պայմանավորված է եղել ներքին ու արտաքին բազմաթիվ պատճառներով։ XV դարի կեսերից Կաֆայում տնտեսական ծանր կացություն է ստեղծվում, աննախընթաց չափերի է հասնում մասսաների դժգոհությունը՝ թե՛ տնտեսական և թե՛ ազգային հողի վրա։ Մյուս կողմից՝ Ջենովայի հանրապետության, հետևապես և Կաֆայի համար գնալով սնրարենպաստ էր դառնում արտաքին-քաղաքական դրությունը, որը պայմանավորված էր ժամանակի միջազգային հարաբերությունների ընթացքով և, մասնավորապես, թուրքական նվաճումների հետևանքով առաջացած ծանր կացությամբ։ Ղրիմի ջենովական առևտրական գաղթավայրերի արտաքին-քաղաքական և ներքին-տնտեսական դրությունը բարդանում և սրվում է երկու հանգամանքով։ Ղրիմում թաթարների ինքնուրույն խանության ստեղծմամբ, որի առաջին խան Հաջի-Գիրեյը բացարձակ թշնամանք էր տածում գեպի ջենովացիները, և 1453 թ. թուրքերի կողմից նեղուցների գրավմամբ, որը խոշոր մի հարված էր ջենովական առևտրին։

Սուլթան Մահմեդ II-ը սկզբից ևեթ լուրջ խոչընդոտներ հարուցեց ջենովացիների սևծովյան առևտրին, նրանց առջև փակելով նեղուցները[2]։ Նման իրավիճակը ի վերջո անիմաստ ու անհեռանկար էր դարձնում ջենովական առևտրական տիրակալությունը սևծովյան ավազանում։ 1454 թ. Մահմեդ II-ի և Հաջի-Գիրեյի միջև կնքված պայմանագիրը[3], որով խանը պարտավորվում էր պաշարել Կաֆան ցամաքից, իսկ սուլթանը խոստանում էր հարվածել ծովից, դրությունը դարձնում է սվելի լուրջ։ Գրավվելուց հետո՝ Կաֆան պիտի դառնար խանի սեփականությունը, պայմանով, որ նրա բնակիչները համարվեին սուլթանի հպատակներ։ Սուլթանն ու խանը խոսքից անմիջապես անցնում են գործի։ Կաֆայի հյուսպատոսի քարտուղարի հաղորդման համաձայն, թուրքական նավատորմիղը՝ կազմված 500 գալերներից, հուլիս սմսին մտնում է Սև ծով և հարձակվում ջենովական Մոկաստրո (Ակկերման) ամրոցի

---

[1] Բրենց առևտրական գաղթատիրությունը Կաֆայում և շրջակա ծովափնյա շերտերում ջենովացիները հաստատել էին XIII դարի 60-ական թթ.։ 1454 թ. Ջենովայի հանրապետությունը, ընկնելով քաղաքական ու տնտեսական ծանր կացության մեջ, իր սևծովյան գաղթակետերը կապալով տալիս է սուրբ Գեորգ մասնավոր բանկի վարչությանը։

[2] „Записки Одесского общества истории и древностей" (այսուհետև՝ ЗООИД), т. 8, 1872, էջ 113։

[3] Նույն տեղում, էջ 114։

վրա[4]։ Սակայն հակահարված ստանալով, թուրքերը ետ են քաշվում և մոտենում Կաֆային։ Նույն ժամանակ ցամաքից քաղաքի պարիսպների տակ երևվում են Հաջի-Գիրեյ խանի զորքերը[5]։ Թուրքական նավատորմիղի հրամանատար Թեմիր-Կայը իր մոտ է կանչում Կաֆայի ներկայացուցիչներին և նրանցից մեծ դիջումներ պահանջում[6]։ Կնքվում է պայմանագիր, որի համաձայն կաֆացիները պարտավորվում են ամեն տարի թաթար խանին վճարել 600 սոմ[7], իսկ թուրքերին հանձնել պատանդներ[7]։ Բացի դրանից, թուրքական սուլթանին Կաֆան ամեն տարի տալիս էր 4000—8000 չերվոնեց[8]։

Ելնելով ստեղծված ծանր կացությունից և առաջին հերթին թուրքերի կողմից նեղուցները փակելու հետևանքով Արևելքի հետ այդ ուղիով առևտրի ընդհատումից[9], սբ. Գևորգ բանկի վարչությունը 1454 թ. հոկտեմբերին Մահմեդ II-ի մոտ է ուղարկում հատուկ դեսպանություն, խնդրելով պահպանել խաղաղություն[10]։ Իր հերթին Կաֆայի հյուպատոս Դեմետրիո դե Վիվալդին ևս պատվիրակություն է ուղարկում Կ. Պոլիս[11]։ Ընդ որում, Կաֆայի պատվիրակներ Անտոնիո դել Պինոն և Բատիստա Ալջերոն ավելի շուտ են ժամանում Կ. Պոլիս, որի պատճառով էլ Քիոս կղզի հասած ջենովական պատվիրակներին կարգադրվում է չմիջամտել Կաֆայի պատվիրակների բանակցություններին թուրքերի հետ[12]։ Ըստ երևույթին, մասամբ էլ այս բանակցությունների շնորհիվ էր, որ մինչև 1475 թ. թուրքերը այլևս հարձակումներ չէին գործում Կաֆայի վրա։ Թուրքական «խաղաղասիրական» վարմունքի հիմնական պատճառը, սակայն, այլ էր։ Զբաղված լինելով Վենետիկի և Հունգարիայի դեմ մղվող պատերազմական գործողություններով, թուրքերը, բնականաբար, Տավրիկիան գրավելու իրենց մտադրությունը գերադասում էին թողնել ավելի հարմար ժամանակի։

Տարեկան տուրք ստանալու պայմանով թուրքերը այդ ժամանակ կաֆացիներին թույլ էին տալիս անցնել նեղուցներով[13]։ Դա, իհարկե, չէր նշանակում, թե նրանք վերացրել էին խոչընդոտները և նեղուցներով ազատորեն երթևեկելու իրավունք տվել։ Հաճախ ջենովական արագընթաց նավերը ստիպված էին մարտեր մղելով անցնել նեղուցներից[14]։ Նեղուցների փակ լինելը ստիպում էր կաֆացիներին մետրոպոլիտյի հետ կապ պահպանել ցամաքային ուղիով՝ Մոկաստրո (Ակկերման)—Լվով—Բուդապեշտ ճանապարհով, որն այդ ժամանակ բավականին բանուկ էր դարձել[15]։ Պարզ է, որ այդ ճանապարհը չէր

4 Նույն տեղում։
5 Նույն տեղում։
6 Նույն տեղում։
7 Սոմը արծաթի որոշակի քաշ էր, այն հավասար էր 4,5—6 ռուբլու (19-րդ դարի կեսերի կուրսով)։
7 Նույն տեղում։
8 „Atti della Societa Ligure di storia patria" (այսուհետև Atti), t. VI, փաստաթուղթ MCCXXI.
9 „Известия Таврической ученой архивной комиссии" (այսուհետև՝ ИТУАК), № 54, Симферополь, 1918, էջ 157։
10 ЗООИД, т. 8, էջ 117։
11 Նույն տեղում, էջ 122։
12 Նույն տեղում։
13 С. Секеранский. Очерки истории Сурожа, IX—XV вв., Симферополь, 1955, էջ 53։
14 ИТУАК, № 54, էջ 136։
15 Նույն տեղում, էջ 139։

կարող փոխհատուցել նեղուցներով ազատ առևտուր անելու կորուստը։ Ինքը Ջենովան էլ գտնվում էր արտաքին անբարենպաստ պայմաններում։ Թշնամությունը Վենետիկի և Իսպանիայի հետ թուլացրել էր Ջենովայի տնտեսական ու ռազմական հզորությունը, և թույլ չէր տալիս նրան մեծ ու անհրաժեշտ օգնություն ցույց տալ տավրիկյան իր գաղթավայրերին։

Անբարենպաստ արտաքին պայմանները անդրադառնում են Կաֆայի առանց այդ էլ բարդացող ներքին կյանքի վրա։ Նեղուցները փակելու հետևանքով առաջացած առևտրա-տնտեսական ճգնաժամը առավել սրում է դասակարգային հարաբերությունները։ Առևտրական վերնախավը և ջենովացի պաշտոնեությունը ձգտում էին նախկինում առևտրից ստացվող օգուտի կորուստը այժմ փոխհատուցել տեղական բնակիչներից գանձվող հարկերն ու տուրքերը ծանրացնելու, գները բարձրացնելու հաշվին, իսկ դա, ինքնըստինքյան, ավելի էր սրում պայքարը ունևորների դեմ։ Դժգոհությունը սաստկանում էր պաշտոնյաների կաշառակերության, արդարադատության բացակայության և տնտեսացիների հանդեպ ջենովացի ունևոր դասի ցուցաբերած վատթար վերաբերմունքի պատճառով։ Քաղաքում գլուխ է բարձրացնում անարխիան, չկար անձի և գույքի անձեռնմխելիություն։ Դրությունն այնքան վտանգավոր էր դարձել, որ շատերը հրաժարվում էին Ջենովայից մեկնել Կաֆա՝ այս կամ այն պաշտոնը ստանձնելու[16], մինչդեռ առաջ այդ պաշտոնները վաճառվում էին։ 1455 թ. Կաֆայի հյուպատոս Թոմասո դե Դոմոկուլտայի հաղորդումից երևում է, որ ջենովական գաղութներում լիակատար անիշխանություն էր տիրում, նավերի վրա և ափին անընդհատ ապստամբություններ ու ելույթներ էին տեղի ունենում, իսկ ջենովացիներին պատկանող Ղրիմի ծովափնյա շերտի մի շարք ամրոցներ գրավել էին տեղացիները[17]։ Քայքայվել էին քաղաքի ֆինանսները։ Սբ. Գևորգ բանկի ղեկավարությունը հյուպատոսներին և ֆինանսական ծառայողներին հաճախ էր մեղադրում շարաշահումների և ապօրինությունների մեջ. նրանց համարելով գաղութային գանձարանի սնանկացման պատճառը[18]։ 1457 թ., օրինակ, քաղաքի դեֆիցիտը, ըստ իտալացի գիտնական Կանալեի հաշվումների, հավասար էր 492 հազար ասպրի[19]։

Դրությունը Կաֆայում բարդանում էր տարբեր ազգությունների միջև եղած հակասությունների պատճառով։ Հայերն ու հույները պայքարում էին ջենովական ճնշումների դեմ, ընդ որում այդ պայքարին մասնակցում էր նաև հայ և հույն առևտրական ու հարուստ դասի այն մասը, որին ջենովացիները գիտում էին իբրև իրենց մրցակցի. մյուս կողմից, ջենովական տիրապետության հիմքերը թուլացնում էին Կաֆայի թաթար բնակիչները, որոնք կապված լինելով գրսի իրենց ցեղակիցների հետ՝ նրանց հայտնում էին քաղաքի պաշտպանության գաղտնիքները[20]։ Այս նկատի ունենալով, տակավին 1449 թ. կանոնադրությունը ընդունում է նախազգուշական մի շարք օրենքներ, ընդհուպ մինչև քաղաքի և նրա արվարձանների մահմեդական բնակիչներին զենք կրելու կամ ունենալու իրավունքից զրկելը[21]։

---

[16] ЗООИД, т. 8, էջ 118։
[17] Նույն տեղում, էջ 125։
[18] Atti, t. VI, փաստաթուղթ CCVIII։
[19] ЗООИД, т. 5, էջ 650։ Ըստ 19-րդ դարի իտալացի գիտնական Կանալեի հաշվումների ասպրը հավասար էր 3 կոպեկի կամ ~ ռուբլի։
[20] Նույն տեղում։
[21] Նույն տեղում, էջ 814։

Կաֆայի պաշտոնեության կամայականությունները իրենց ամբողջ ուժով ծանրանում էին հատկապես հայ և հույն գանգվածների ուսերին։ Ջենովացի հարուստ վաճառականներն ու ազնվականները «դատավորների կաշառակերության հետևանքով գրեթե միշտ արդար էին դուրս գալիս, չնայած նրանց աղքատ հակառակորդների արդարացի լինելուն»[22],—գրում է Լ. Կոլին, հենվելով ժամանակի իտալական փաստաթղթերի մանրազնին ուսումնասիրության վրա։ Կաֆայի պաշտոնյաները մշտական թշնամանքի մեջ էին միմյանց հետ, ձգձգում էին գործերը, կաշառքներ վերցնում և վեճերը լուծում ջենովացիների օգտին, մանավանդ, երբ աղքատ հակառակորդը լինում էր հայ, հույն կամ թաթար[23]։ 1455 թ. Ջենովա ուղարկած իրենց խնդրագրերում Կաֆայի հայերն ու հրեաները հայտնում էին, որ ջենովացի պաշտոնյաները իրենց վերաբերվում են թշնամաբար և ատելությամբ[24]։ Տեղացիների նմանօրինակ բողոքները նկատի ունենալով՝ սբ. Գևորգ բանկի վարչությունը XV դարի կեսերից մասնակի որոշումներ ու հրահանգներ է ուղարկում Կաֆայի իր պաշտոնյաներին՝ հայերի և հույների հետ համերաշխություն հաստատելու ցուցումներով[25]։ Սակայն դրանք չէին կենսագործվում, իսկ քաղաքի հիմնական բնակչության՝ հայերի և հույների բողոքներն ու դժգոհությունները օրըստօրե սրվում էին, մանավանդ որ դրանց առիթ էին տալիս իրենք՝ ջենովացիները, խառնվելով նաև նրանց եկեղեցական ներքին գործերին։

Անմխիթար վիճակում էր գտնվում քաղաքի պաշտպանությունը։ Քաղաքը զուրկ էր հրանոթներից[26], թեև 1470-ական թթ. սբ. Գևորգ բանկը Աթենից ու Ստրասբուրգից այստեղ էր ուղարկել երկու վարձու հրետանավորների[27]։ Ըստ երևույթին բանկը մտադիր է եղել տեղում հրանոթներ արտադրել, բայց այդ նրան չի հաջողվել։ Կաֆա են ուղարկվում շատ փոքր թվով վարձու զինվորներ, ինչպես նաև ռազմական ինժեներ Անտոնիոն Բոնինոն[28]։ Եվ ընդհանրապես վտանգավոր այս տարիներին Ջենովային միայն մեկ անգամ հաջողվեց ցամաքով Կաֆա ուղարկել շատ փոքրաթիվ զորք։ Քաղաքի պաշտպանունակությունն ու դիմադրողականությունը բարձրացնելու ուղղությամբ ձեռնարկված քայլերը պարզապես անարդյունք են դուրս գալիս։ Այսպես, 1463 թ. Կաֆայի ներկայացուցիչ Գամացոն, Լեհաստանի թագավորի թույլտվությամբ, Պոդոլյանում 500 հոգուց բաղկացած մի ջոկատ է հավաքագրում՝ Կաֆա բերելու համար։ Բայց ճանապարհին այս վարձկանները ավերում են Բրացլավ քաղաքը և մարզային վոեվոդ Միխայիլ Զարտորիյսկին հետապնդում ու կոտորում է նրանց[29]։ Դեռևս դրանից առաջ, 1455 թ. սբ. Գևորգ բանկը փորձել էր երկու նավ ուղարկել Կաֆա, բայց թուրքերը նեղուցների մոտ դրանցից մեկը խորտակում են, իսկ մյուսին ստիպում են դառնալ[30]։ Անհետևանք մնացին նաև կա-

---

[22] Л. Колли, Кафа в период владения ею банком св. Георгия. Симферополь. 1911, էջ 22։

[23] Տե՛ս նույն տեղում։

[24] Նույն տեղում, էջ 35։

[25] 1449 թ. կանոնագրության համապատասխան կետերը (ЗООИД. т. 5). ինչպես նաև ИТУАК, № 52, 1915, էջ 168։

[26] ЗООИД, т. 5, էջ 834։

[27] ИТУАК, № 54, էջ 139։

[28] Նույն տեղում։

[29] Н. Мурзакевич, История генуэзских поселений, Одесса, 1837, էջ 71։

[30] Նույն տեղում։

ֆացիներին օգնելու առթիվ հունգարական, ֆրանսիական, անգլիական և փորթուգալական թագավորներին արված խնդրանքները, ինչպես նաև Հռոմի պապի դիմումները՝ ինդուլգենցիաներ շնորհելու շռայլ խոստումներով[31]։

Մխիթարական շատ քիչ բան կար բուն Կաֆայի վարչության վարած արտաքին քաղաքականության մեջ՝ քաղաքի արտաքին կապերը կայունացնելու տեսակետից։ Քաղաքի թիկունքը թաթարական կողմից ոչ միայն խարխուլ էր, այլ ուղղակի թշնամական, թեև Հաջի-Գիրեյից հետո խան դարձած Մենգլի-Գիրեյը Կաֆայի իտալացիների հանդեպ բարյացակամ վերաբերմունք ուներ, որովհետև խանական գահի համար ութ եղբայրների մղած պայքարում Կաֆայի ջենովացիները պաշտպանել էին երկար ժամանակ իրենց մոտ դաստիարակություն ստացած Մենգլի-Գիրեյին։ Մենգլի-Գիրեյի եղբայրներն ու նրանց կողմնակիցները և առանձնապես Նորդուլետ-Գիրեյը՝ իր համախոհներով, բացարձակ թշնամական դիրք էին բռնել Կաֆայի և նրա դաշնակից Մենգլի-Գիրեյի հանդեպ և գաղտնի բանակցություններ էին վարում թուրքական վեզիրի հետ։ Նորդուլետին աջակցում էին որոշ ջենովացիներ, որոնք այս կամ այն առիթով դժգոհ էին Կաֆայի իշխանություններից։ Դրանցից էր, օրինակ, Յակոբո Գրիմալդին, որը, թաքնվելով Թամանում, հարաբերության մեջ մտավ խանի եղբայրների հետ և Նորդուլետին առաջարկեց իր ծառայությունները՝ Կաֆայի և Սուրխաթի վրա հարձակվելու նպատակով զինված ստորաբաժանում կազմելու գործում։ Դա Նորդուլետին խոստանում էր այդ քաղաքները գրավելուց հետո նրան ճանաչել խան»[32]։ Առևտրականների անվան տակ թուրքական գործակալները այդ ժամանակ վխտում էին Կաֆայում»[33]։

1468 թ. հյուպատոս Ջենտիլե դե Կամիլայի և մյուս պաշտոնյաների հրավերով Մենգլի-Գիրեյը, իբրև բարձր հյուր, ժամանում է Կաֆա։ Սրան առիթ էր ծառայել այն, որ խանը իջեցրել էր գաղութային գանձարանից խանությանը վճարվող հարկը»[34]։ Նրանց միջև կնքվում է դաշնագիր, որը վերականգնում էր 1381 թ. համաձայնության հոդվածները, խանության և Կաֆայի միջև հաստատում մշտական խաղաղություն և պարտադրում փոխադարձ պաշտպանություն և օգնություն՝ ընդդեմ արտաքին վտանգի[35]։ Տվյալ դեպքում երկու կողմերն էլ ակնարկում էին թուրքական սուլթանին։ Սակայն ինչպես Մենգլի-Գիրեյի հետ բարեկամական այս կապերի հաստատումը, այնպես էլ բարեկամությունը Հարևան Մանգուպի (Թոդորոյի) իշխան Սաիկի (Իսահակի) հետ[36] շնչին պատնեշ էին օրավուր մոտեցող թուրքական հեղեղի առջև։ Ավելին, հարևանների հետ այդ մերձեցումը, ինչպես և Բալկաններում թուրքերի անհաջողությունները, որոշ չափով ապակողմնորոշում են սբ. Գևորգ բանկի վարչությանը և թուլացնում Կաֆայի պաշտպանունակությունը բարձրացնելու ուղղությամբ նրա ձեռնարկումները։ Սբ. Գևորգ բանկի անհոգությունն այնտեղ է հասնում, որ 1471 թ. Կաֆայի իշխանություններին ուղարկած հրահանգում նա պնդում էր, որ եթե նույնիսկ խանը հրաժարվի իր պայմանագրային պարտավորություններից, ապա քաղաքում եղած ուժերով թուրքերին կարելի է ետ շպրտել.

31 Նույն տեղում։
32 ИТУАК, № 54, էջ 133։
33 Նույն տեղում։
34 Նույն տեղում, էջ 132։
35 Նույն տեղում։
36 Նույն տեղում, էջ 155։

«Կաֆայի կողմը կանգնած է Ղրիմի խան Մենգլի-Գիրեյը, բայց պայմանագրի հոդվածները պահպանելուց վերջինիս հրաժարվելու դեպքում՝ բերված ուժերի և միլիցիայի միացմամբ՝ թուրքերից վախենալը ավելորդ է»[37]։ Եվ ապա՝ «Կաֆան, փառք աստծո, պատսպարված նորերս նորոգված իր պարիսպների ետևում և այդպիսի բազմաքանակ վարձկան զորքերով, համարձակորեն կարող է ետ շպրտել ոչ միայն թուրքերի, այլև ամեն մի այլ թշնամու հարձակում»[38]։ Սրանք ինքնահանգստացման վտանգավոր խոսքեր էին, որովհետև վարձկանների թիվը քաղաքում առհասարակ շատ փոքր էր։ Բանկի կառավարչության կարգադրությամբ այն կրճատվում և հասցվում է ընդամենը 200 հոգու[39]։ Այդ անհեռատես քայլը պատճառաբանված էր նրանով, որ իբր թե Ռունիյադի գլխավորած սերբա-հունգարական բանակի կողմից Բելգրադի տակ Մահմեդ II-ի զորքերի կրած ջարդից հետո Մենգլի-Գիրեյը պիտի հովանավորություն խնդրի ոչ թե Թուրքիայից, այլ Ջենովայից[40]։ Տկարացած Կաֆան ներքին և արտաքին այս անբարենպաստ պայմաններում կանգնում է թուրք-թաթարական միացյալ ուժերի սպառնալիքին դեմ-հանդիման. բավական էր մի հարված և այն կրնկներ։ Վերահաս աղետը արագացրեց ինքը՝ Կաֆայի ջենովական ապաշնորհ կառավարությունը՝ Կամպանիայի մարզի թաթարական կառավարչին հեռացնելու գործում ունեցած իր բացահայտ միջամտությամբ։ Մահմեդ II-ը, իհարկե, պատրաստվում էր վաղ թե ուշ պաշարել Կաֆան։ 1475 թ. սկզբներին նա արդեն պաշարել էր Մոկաստրոն[41]։ Բայց անտարակույս է այն, որ թաթարական կնճռոտ գործերին ջենովացիների միջամտությունը նպաստեց թուրք-թաթարական առանց այդ էլ համակիր ուժերի արագ միավորմանը։ Այդ միջամտությունը արտահայտվեց հետևյալ կերպ. 1473 թ. մահանում է Կամպանիայի մարզի պրեֆեկտ (տուդուն, կառավարիչ) Մամակը։ Մահից առաջ նա ցանկություն է հայտնում իշխանությունը հանձնել եղբորը՝ Էմինեկին, դրանով իսկ զրկելով իր որդի Սայթաղին այդ պաշտոնը ժառանգելուց[42]։ Էմինեկը ստանձնում է պաշտոնը և իր կառավարման ընթացքին տալիս հակաջենովական ուղղություն, արգելելով մթերքների ներմուծումը Կամպանիայից[43] Կաֆա[44]։ Սա, իհարկե, չէր կարող դուր գալ ջենովացիներին։ Էմինեկի դեմ էր գործում Մամակի այրին, փառասեր Ազրիպինան[45], որը սկզբից ևեթ ձգտում էր տուդունի պաշտոնում տեսնել իր որդի Սայթաղին։ Սրան հաջողվում է կաշառել Կաֆայի գրեթե բոլոր պաշտոնյաներին, այդ թվում՝ հյուպատոս Կաբելային և նրա առաջին ու երկրորդ օգնականները Օրերտո Սկվարչիաֆիկոյին և Ֆրանչեսկո Ֆիեսկուն[46]։ Ազրիպինայի կողմից կաշառված նրա գործակալ Կոստանդին Պետրարոսան, ջենովացի տարեգիր Ջուստինիանիի թողած տեղեկության համաձայն՝ «սկսում է համոզել Նիկոլո Տորիլին (Կամպանիայի ջենովական կա-

---

[37] Atti. t. VII, I. փաստաթուղթ DCCCXLII.

[38] Նույն տեղում։

[39] ИТУАК, № 54. էջ 154։

[40] ЗООИД. т. 8 էջ 113։

[41] Atti, t. VII, փաստաթուղթ MCXVII.

[42] ИТУАК, № 55 էջ 155։

[43] Կամպանիա էր կոչվում Ղրիմի հարավ-արևելյան ծովափը, որ ենթակա էր ջենովացիներին։

[44] Atti. t. VII, II, էջ 8։

[45] ИТУАК. № 55, էջ 155։

[46] В. Х. Кондораки, Универсальное описание Крыма, т. 3, ч. 9, էջ 35։

ռավարչին—Վ. Մ.), նրան խոստանալով 2000 չերվոնեց, Օբերտո Սկվարչիաֆիկոյին՝ 2000 և այս կամ այն անձանց և հյուպատոսին տրվող ընդհանուր դրամը հասնում է վեց հազար չերվոնեցի։ Եվ բոլորը լինելով աղքատ ու ժլատ՝ կաշառվեցին և միասին պայմանավորվեցին բավարարել այրու ցանկությունը և դլուխ բերել Կամպանիայում Սայթաղին տեղակալ նշանակելը, ու նրան հրավիրել Կաֆա»[47]։

1474 թ. նոյեմբերին Սայթաղը ժամանում է Կաֆա։ Նույն ժամանակ Կաֆայի կառավարության հրավերով, իբրև հյուր, քաղաք է դալիս Մենդլի-Դիրեյը, որին հրավիրել էին Սայթաղին տուդուն դարձնելու համար նրա համաձայնություն ստանալու նպատակով[48]։ Նոյեմբերի 14—20-ը խան լինում է Կաֆայում, բայց համառում է Էմինեկի փոխարեն նշանակել Սայթաղին, վախենալով նյութվող գահակալական կռիվների բորբոքումից և Սայթաղի հակառակորդներ Կարա-մուրզայից ու Այդարից։ Արտաքնապես Կաֆայի վարիչները չհակառակեցին խանին, իսկ վերջինս էլ Շիրինների տոհմի գլխավոր նշանակեց Կարա-մուրզային[49]։ Զգալով իր համար ստեղծվող անբարենպաստ վիճակը, Էմինեկը փախչում է անհայտ ուղղությամբ[50]։ Կաֆայի բարձրաստիճան պաշտոնյաները, որոնք կաշառված էին Սայթաղի մոր կողմից, շարունակում են ճնշումը խանի վրա, սպառնալով Սայթաղին չնշանակելու դեպքում չազատել նրա պատանդ եղբորը։ Իսկ դա կսրեր գահակալական պայքարը խանի և նրա եղբայրների միջև։ Մենգլի-Դիրեյը ստիպված համաձայնում է Սայթաղի նշանակմանը, «որ հույժ վտանգավոր էր և խանի և գաղութի համար»—իրավացիորեն եզրակացնում է Մ. Մալովիստը[51]։

Էմինեկը, որը դաստիարակված էր քրիստոնյաների նկատմամբ ատելության ոգով և առանց այդ էլ փայփայում էր ջենովացիներին Ղրիմից դուրս քշելու մտադրությունը, գործում է ավելի վճռական կերպով։ Իրեն մտերիմ ջենովական պաշտոնյա Անդրեա Ֆատինանտի աջակցությամբ[52] փախչելով Կաֆայից և հենվելով թաթարական պետերի՝ իրեն կողմնակից մասի վրա, նա համաձայնության է գալիս թուրքական սուլթանի հետ՝ միացյալ ուժերով Կաֆայի վրա հարձակվելու համար[53]։

Միլանի և Բուդապեշտի արխիվներում պահպանված մի շարք փաստաթղթեր, որոնց մի մասը թարգմանել և հրատարակել է Լ. Պ. Կոլին՝ «Պատմական վավերագրեր Կաֆայի անկման մասին» վերտառությամբ, ստույգ տեղեկություններ են պարունակում Կաֆայի գրավման և նրա բնակչության նկատմամբ գործադրված անօրինակ բռնությունների մասին։

1475 թ. մայիսի վերջերին թուրքական նավատորմը, Կետիկ Ահմեդ փաշայի հրամանատարությամբ, մոտենում է Կաֆային։ Հունգարական թագավորի մոտ Վենետիկի դեսպան Սեբաստիան Բադորոյի 1475 թ. հունիսի 10-ի հաղորդումից երևում է, որ թուրքերին են միանում թաթարական բարձրաստիճան զինվորական պետերը, ինչպես նաև «անդրալպիացիները» (նկատի ունի լե-

---

[47] ИТУАК, № 55, էջ 155։
[48] Նույն տեղում, էջ 161—162։
[49] Marian Malowist, Kaffa w drugiej połowie XV-ego wiku, Warszawa, 1939, էջ 56։
[50] Նույն տեղում։
[51] Նույն տեղում։
[52] ИТУАК, № 55, էջ 174։
[53] Նույն տեղում։

հերին ու գերմանացիներին)[54]։ Թուրքական դեսանտային ուժերի՝ ցամաքից Կաֆային մոտենալու ժամանակ, քաղաքից 7 կմ հեռավորության վրա գտնվող Պասիդինա նավահանգստում, թաթարական վարիչների և թուրքական հրամանատարության միջև կնքվում է համաձայնագիր՝ ռազմական համատեղ գործողությունների վերաբերյալ։ Ականատեսներից մեկը, որը գերի էր բերվել Կոստանդնուպոլիս, այնտեղից գրում էր, թե համաձայնություն կնքելու հաջորդ օրը, հունիսի 1-ին, Կաֆան ցամաքից և ծովից լրիվ շրջապատման է ենթարկվում[55]։

Կաֆան ծովից պաշարել էին տարբեր մեծության 480 թուրքական ռազմանավեր՝ զինված պաշարողական հրետանիով։ Հայկական աղբյուրները նշում են 300 նավ[56]։ Քաղաքի բնակչությունը, զրկված լինելով հրետանուց և դրսի որևէ օգնությունից, հուսահատական դրության մեջ ապավինել կարող էր միայն իր անհամեմատ փոքրաթիվ ուժերին։ Նա զուրկ էր ոչ միայն բավարար քանակությամբ զինապաշարից, այլև երկարատև պաշարման ժամանակ անհրաժեշտ պարենից։ Այնինչ թուրքերին էին միացել 60.000 թաթարներ[57], ինչպես նշված է Մոլդավիայի վոեվոդ Ստեֆանի մոտ եկած հունգարական թագավորի դեսպաններ Դոմինիկո ո'Ալբա-Ռեալի և նրա ընկեր Գասպարի հաղորդագրության մեջ։ Իսկ Քիոս կղզուց ուղարկված անստորագիր մի նամակից երևում է, որ թուրքերից և իրեն անհնազանդ թաթարներից սարսափած Մենգլի-Գիրեյը, զգալով, որ այլևս անօգնական է պահելու իշխանությունը, 1500 հեծյալների հետ ճողոպրում է Կաֆա[58], դրանով իսկ առավել ազատ գործելու հնարավորություն տալով Էմինեկին և իր մյուս հակառակորդներին։ Այնպես որ սրա հետ Կաֆայի կառավարության ունեցած համաձայնությունը փաստորեն կորցնում է իր նշանակությունը։ Թշնամի ուժերի մեջ էին նաև խանի եղբայրները։

Հինգ օր շարունակ կաֆացիները դիմադրում էին։ Մարտնչողները հիմնականում քաղաքի բնակիչ տասնյակ հազարավոր հայերն էին և ապա՝ հույները և ոչ թե 1000 ջենովացիները[59]։ «Յայնժամ ընդդիմացան իշխանքն և ազնուականք մեր և ոչ ետուն զբերդն»[60],—ասում է ղրիմահայերի հիշատակարանը։ Հինգերորդ օրը, այսինքն հունիսի 4-ին կամ 5-ին (հին տոմարով), գրում էր Քիոս կղզում ապրող Ջենովայի քաղաքացի Ջիակոմո Ջուստինիանին 1475 թ. հուլիսի 10-ին, հայերն ու հույները հայտարարում են «լատինացիներին՝ այսուհետև թուրքերին դիմադրելուց իրենց հրաժարվելու մասին և պահանջում հանձնվել»[61]։ Բոլորովին սխալ կլիներ, իհարկե, իրերի պարտադրմամբ հայերի ու հույների առաջ քաշած այս ստիպողական պահանջը ներկայացնել իբրև դավաճանություն կամ մատնություն։ Իրողությունն այն է, որ ջենովացիների կողմից գրեթե անպաշտպան թողնված քաղաքը հայերն ու հույները անկարող էին պաշտպանել թուրք-թաթարական «թոփ ու թուֆանք շատ» ունեցող, այսինքն ժամանակի ռազմական տեխնիկայով հագեցված ուժերի հանդեպ, ո-

[54] Л. П. Колли, Исторические документы о падении Кафы, էջ 8։
[55] Ф. Брун, Черноморье, часть, I, էջ 236—237։
[56] Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 7442, թ. 281բ։
[57] Л. П. Колли, Исторические документы о падении Кафы, էջ 12։
[58] Նույն տեղում, էջ 14։
[59] AIII, t. VII, II, էջ 343 և С. Секеринский, աշխ. աշխ., էջ 229։
[60] Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 7442, թ. 281բ։
[61] Л. П. Колли, Исторические документы о падении Кафы, էջ 16։

րոնք, ի դեպ, քաղաքը գրկել էին պարենից և խմելու ջրից։ Ողբալով քաղաքի անկումը, Ներսես Կաֆայեցին իր տաղում ասում է[62].

Ինն ամ հայոց թվին Ի՝ Նէր աւելին,
Ի յաղդմանէ մեղաց շարին.
Միաբանեցան այն ասկրնին,
Թաթարն եկաւ ի վերայ Կաֆին,
Ջրերն զամէնն կտրեցին.
Կրոիվ տրին ի հետ քաղքին,
Եւ շատ արիւն երկիր հեղին.
Յետոյ եկին Ղատրբ դանին,
Ու Դամ էր աւելին,
Եւ միաբանի դուրս ելին
Ղրիմայ քաղաքն բոլորեցին,
Պաղում անբիվ հեծեալ էին,
Թոփ ու բուֆանք շատ ունէին...

Մեծ մեծ թոփերն երբ քաշեցին,
Երկինք՝ և՝ երկիր կու դողային.
Խիստ շատ վնաս եղև քաղքին,
Տուն տանիարքն բշին։

Օրհասական այսպիսի վիճակը ստիպում է Կաֆայի բնակիչներին հանձնվել թուրք-թաթարական գինված ուժերի ողորմածությանը։ Քիոս կղզուց Ջենովա ուղարկած անստորագիր նամակի հեղինակը, որը ուշադրի բացասաբար է տրամադրված դեպի տեղացիները, նշում է ձեռնարկած այդ քայլի զրդապատճառը։ «Այս վերջինները (հայերն ու հույները—Վ. Ս.),—գրում էր նա,—գդալով, որ պաշտպանվելու համար իրենք քանակապես շատ թույլ են, հայտնում են թուրքական պետին, որ ցանկանում են հանձնվել, այլապես սրախողխող կարվեին այնքան լատինացիներ, որքան կգտնվեր Կաֆայում[63]. *Ինչպես վկայում է նամակից մեջ բերված հատվածը, նույնիսկ նրա հեղինակը չի կարողացել թաքցնել այն իրողությունը, որ նախ՝ ջենովացիների կողմից անպաշտպան թողնված քաղաքի միակ պաշտպանները եղել են հայերն ու հույները և որ վերջիններիս կողմից թուրքական զորքերին հանձնվելը ստիպողական մի քայլ էր ապարդյուն դիմադրությունից հետո և, վերջապես, որ այդ քայլի շնորհիվ ջենովացիների (լատինացիների) թեկուզ մի մասը հնարավորություն ստացավ խուսափել մահից։*

Իսկ ազգն Ֆռանկաց առեալ հրամանն,
Ջուեալ աստուստ գնացին ի Ֆռանկստանն[64],—

ասում է Մարտիրոս Ղրիմեցին, կարծես հաստատելու համար այս միտքը։

Կաֆայի պաշարման ժամանակ իրենց կորցրած ջենովական պաշտոնյաները ստիպված են լինում քաղաքի պաշտպանության գործը և զորքերի հրամանատարությունը հանձնել տեղացի մի հայի[65]։ *Հավանաբար, հյուպատոսն ու մասարները տվյալ դեպքում չեն կարողացել աչքաթող անել այն, որ քաղաքի պաշտպանները հիմնականում հայերն են՝ իբրև բնակչության ճնշող մեծամասնություն։ Քաղաքի պաշտպանները խելացի են համարել հանձնվել, քան թե մի երկու օր էլ անզոր դիմադրություն ցույց տալ, այն էլ այն ժամանակ, երբ թուրքական հրետանին քաղաքի պարիսպների մեջ բազմաթիվ ճեղքվածքներ էր առաջացրել*[66]։ *Ընդ որում, թուրքերին հանձնվելու որոշումը ընդունվել է այն բանից հետո միայն, երբ ջենովական առանց այդ էլ աննշան քանակի վարձկան զորքերը լիովին բարոյալքվել էին, իսկ նրանց հրամանատարն էլ*

---

[62] *Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 7709, էջ 57—58։*
[63] Л. Колли, Исторические документы о падении Кафы, *էջ 14։*
[64] *Ղ. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, էջ 150։*
[65] В. Х. Кондораки, Универсальное описание Крыма, т. 3, ч. 9, *էջ 37։*
[66] „Сын Отечества", 1848, № 10, *էջ 67։*

փախուստի էր դիմել։ «Տեսեալ իշխանաց մերոց և զաղնուականաց զթուլութիւն իշխանին ջինիւիզաց և զօրացն նոցին. մանավանդ թէ իշխանն փախուստ էառ, անճար մնացեալ ի սովու, առին զերդումն և զքաղաքն ետուն թուրքաց»[67]։

* * *

Տեր դառնալով Կաֆային, թուրքական զորքերը, թաթարների հետ միասին, իրենց սովորության համաձայն դրժում են տված խոստումը և քաղաքը կատարյալ սպանդանոցի վերածում։ Թե՛ հայկական և թե՛ իտալական աղբյուրները[68] վկայում են, որ քաղաքի քրիստոնյա բնակչությունը թուրքերի կողմից անխնա սրի է քաշվում։ Թե որքան էր սպանվածների թիվը, այդ մասին աղբյուրները լռում են։ Բայց բոլոր այդ աղբյուրներից երևում է, որ հսկայական թվով բնակչություն է կոտորվել։

Ապա սպանդին հաջորդում են դերեվարությունն ու հարկերի ծանրացումը։ Թուրքական հրամանատարությունը նախ կատարում է դույքագրում և բնակչության հաշվառում. «մանր ու մեծն դրեցին»,—ինչպես ասում է Ներսես Կաֆայեցին[69]։ Սկզբում Կետիկ Ահմեդը հայտարարում է, թե ինքը հրամայել է կազմել ջաղաքացիների ունեցվածքի ճիշտ ցուցակ, իբր թե որպեսզի հնարավոր լինի արդարացի կերպով բաշխել հարկերը։ Այնինչ այդ հաշվառումը նրան պետք էր, որպեսզի պարզի, թե ով ինչ ունի և ապա դրանք բռնագրվի։ Եվ իրոք, թուրքերը «զամենն ի քաղքէն ժողովեցին» և «զամենն առեալ կողոպտեցին»[70]։

Ստարբերկրյա վաճառականներից փաշան պահանջեց վճարել 20—25 հազար դուկատ, իսկ ջենովացիներից՝ մի դումար, որը հավասար էր նրանց ունեցվածքի արժեքի կեսին[72]։ Ծանր էր տեղացիների վիճակը։ Ներսես Կաֆայեցու ասելով՝

Տունն ու ագին գին բռնեցին.
Ջերեմ բաժինն նու ազին.
Աղաչանօք զկէսն առին։
Խիստ նեղութիւն կայր քաղաքին.
Ամենն ի լաց հառաչէին
Ոանվայ չիմաւր որ փարիչ՝ին...[73]

Ալբա Յուլիա քաղաքի (Տրանսիլվանիայում) եկեղեցու ավագ քահանա, պապական պրոտոնատար Դոմինիկի՝ Կաֆայի անկման մասին 1475 թ. ուղարկած հաղորդման մեջ ասված էր, որ թուրքերին է տրվել 1011 կաշե տոպրակներով լիքը դրամ, չհաշված թանկագին քարերը, ընդ որում յուրաքանչյուր

67 Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 7442, թ. 281բ։

68 Լ. Խաչիկյան, Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, էջ 389—390, տե՛ս Հայկ. ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 7442, թ. 281—282, ձեռ. № 7709, թ. 57—59։ „Засед ния Одесского общества ист. и древностей", заседание 269, от 3 марта 1893 г. Письмо настоятеля церкви Алба Юлия (Կաֆայի անկման մասին), էջ 6—8։ „Сын Отечества", 1848, № 10, էջ 67։ «Արոր», 1911, № 10—11, էջ 110 և այլն։

69 Հայկ. ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 7709, թ. 58։

70 „Сын Отечества", 1848. № 10, էջ 67։

71 Հայկ. ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 7709, թ. 58։

72 „Сын Отечества", 1848, № 10, էջ 68։

73 Հայկ. ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 7709, թ. 59։

տոպրակում եղել է 600 դուկատ։ Այլ տեղեկությունների համաձայն թուրքերը վերցրել են քաղաքի գույքի կեսը և 15—100 ասպր՝ յուրաքանչյուր բնակչից[74]։

Ջենովական աղբյուրներից քաղած նյութերի հիման վրա Վ. Խ. Կոնդորակին որում է, որ թուրքերը քաղաքի 40 հազար բնակիչների տեղափոխեցին Կոստանդնուպոլիս[75]։ Տղաներին վերցնում են ենիչերության, իսկ գեղեցիկ աղջիկներին՝ հարեմ[76]։ Թուրքերը չխնայեցին նաև Կաֆայի իտալացի բարձր պաշտոնյաներին. մասնավորապես Օ. Սկվարչիաֆիկոյին նրանք կախեցին, իսկ հյուպատոս Կաբելային՝ քշեցին թիապարտության[77]։

Թուրքական լուծը ծանր նստեց նաև Կաֆայի հայ ազգաբնակչության վրա։ Հայերի մարդկային կորուստները և զրկանքները հետագայում պահպանվել ու գրանցվել են ղրիմահայերի պատմություն—հիշատակարանում, որտեղ ասված է, թե խախտելով կնքած պայմանը՝ թուրքերը «հանապազ հարկադրեցին իշխանաց մերոց և ազնուականաց՝ դառնալ ի կրօնս մահմետական. զի դիւրաւ նուաճել զմնացեալ գոեհիկս»[78]։ Կետիկ Ահմեդ Փաշան մի քանի անգամ հայ երևելիներին իր մոտ ճաշի հրավիրելով՝ նրանց առաջարկում է մահմեդականություն ընդունել։ Հայ իշխանավորները մերժում են նրա առաջարկը։ Փաշան դիմում է ենթգության։ Կրկին անգամ հայ մեծավորներին իր մոտ ճաշի կանչելով, նա ասում է, թե քանի որ մենք արդեն բարեկամներ ենք, ապա վիրավորական է, որ նրանք իր մոտ գինված են գալիս. «ոչ է պատեհ ձեզ զսուր ընդ մեջ կապեալ առ իս գալ ի ճաշ, կամ ընթրիս»[79]։ Կատարելով փաշայի կամքը, վերջինիս մոտ նրանք «գնացին սառանց սրոյ»[80]։ Եվ «յետ ճաշելոյ նոցին ի յիջանելն ի ձիգ ձիգ աստիճանսն պալատին՝ դահիճքն ըստ հրամանի փաշային՝ մի-մի կոտորեալ արկին ի ծով... Ապա հրամայեաց թուրքաց և ի թաթարաց կոտորել զամենայն ազգս հայոց, որք ի նմին աւուր բազմամարդ քաղաքն Ֆեոդոսիայ սակաւաբնակ արասրին. զի գծերս և զտղայս, զարս և զկանայս սրոյ ճարակ եառն և զարիւնս նոցա յերկիր հեղեղեալ իբրև զվտակս գետոց ընթանայր ի փողոցսն...»[81]։ Ապա գերելով «անթիվ աղջիկք և մանկունք և մատաղ տղայք», թուրքերը նրանց նավերով տանում են Կ. Պոլիս։ Ղրիմահայերի հիշատակարանի այս տեղեկությանը նույնությամբ հանդիպում ենք Ներսես Կաֆայեցու «Ողբ մայրաքաղաքին Կաֆայու» տաղում.

Կտրին մարդիքն մորդեցիս, զղուստս և որդիքն ժողովեցիս.
Զհորն գլուխն կտրեցին, զորդիքն սուին և գերեցին.
Ամենա ժողովեցին, գերկու եղբայրքն ի մեկ տեղին.
Զնորատսսան հարսս ու փեսան լալով սուին ի նաւ դրին[82]։

---

[74] „Заседание Одесского общества истории и древностей", заседание 269, 3 марта 1893 г., էջ 8։

[75] В. Х. Кондораки, Универсальное описание Крыма, т. 3, ч. 9, էջ 37։

[76] Նույն տեղում։

[77] «Արոր», 1911, № 10—11, էջ 110։

[78] Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. N 7442, թ. 281բ։

[79] Նույն տեղում։

[80] Նույն տեղում։

[81] Նույն տեղում, թ. 282ա։

[82] Նույն տեղում, ձեռ. N 7709, թ. 58։

Կաֆացիների բախտին արժանացան նաև Կազարաթի ու Սուրխաթի հայերը[83]։ Ղրիմի երբեմնի գուտ հայկական գյուղաքաղաք Կազարաթը, հավանարար, այդ ժամանակ է քարուքանդ դարձել և ավերակների վերածվել, որովհետև XVI—XVIII դարերի ձեռագրերում այդ անվամբ բնակավայր այլևս չի հիշատակվում։

Ղրիմի այս անցքերից մի փոքր ուշ՝ 1476 թ. սուլթան Մուհամեդը «ծովով եւ ցամաքով» հարձակվում է «ի Ստեֆան ի վոյվոտային վերայ», այսինքն Մոլդավիայի վրա[84], մտնում է Երկիրը, ավերում և կոտորում բնակչությանը, որից, իհարկե, չէին կարող խուսափել նաև այնտեղ ապրող հայերը։ Մոլդավահայերը առավել մեծ զրկանքներ ու զոհեր են կրում և տեղահանության ենթարկվում Մուհամեդի հաջորդ սուլթան Բայազետի օրոք։ 1484 թ. Դանուբի գետաբերանի նավահանգիստ Կիլիան գրավելուց հետո թուրքերը բազում զորքով հարձակվում են Ակկերմանի վրա։ Գրիգոր Դարանաղցու ասելով, սուլթանը «զհոն եղած հայերին սուրկուն արար (այսինքն արտաքսեց—Վ. Մ.), եւ զհոռոմքն այլ եւ զինչ ազգ որ այնդ կային՝ զամէնքն կնոջմովք և տղայմովք՝ զամէնքն հանեց եւ երեր յԸստամբոլս»[85]։

* * *

Բուրժուական և կղերա-ֆեոդալական մի քանի պատմաբաններ, շրմրոնելով XV դարի կեսերին Եվրոպայում և Մերձավոր Արևելքում տեղի ունեցած իրադարձությունների էությունը, այն միտումնավոր կարծիքն են հայտնել, թե Կաֆայի անկման պատճառներից մեկը եղել է քաղաքի մի քանի հայ մեծահարուստների դավաճանությունը։ Այս կարծիքը առաջ քաշող հեղինակները ուղղակի կամ անուղղակի իրենց այդ պնդումը առնչել են կաթոլիկության հանդեպ ղրիմահայերի ունեցած դիմադրության, նրանց հակալատին նկրտումների և, մասնավորապես, քաղաքի հայ եպիսկոպոսական աթոռի թեկնածուի առիթով 1471—1475 թթ. Կաֆայի հայ գաղութում բորբոքված պայքարի հետ։

Հայտնի է, որ տակավին XIV դարի սկզբներից ղրիմահայերը, մանավանդ թերակղզու հարավ-արևելյան ծովափնյա շերտում հաստատվածները, սկսում են դիմադիր կանգնել պապական քարոզիչներին, որոնք 1318 թ. Կաֆայում հաստատված եպիսկոպոսությունը[86] դարձնելով հենակետ՝ լայն գործունեություն էին ծավալել այլազգիներին կաթոլիկացնելու ուղղությամբ։ Ներհակությունը մի կողմից հայ ազգաբնակչության (որի թիվը միայն Կաֆայում նրա անկման նախօրյակին հասնում էր շուրջ 46 հազարի)[87], իսկ մյուս կողմից Ղրիմում գործող կաթոլիկ հոգևորականության ու ջենովական պաշտոնեության միջև ավելի բացահայտ կերպարանք է ստանում Կաֆայի անկմանը նախորդող տարիներին (1471—1475 թթ.), երբ քաղաքի ջենովական գաղութային վարչությունը ուղղակի միջամտում է եպիսկոպոսական աթոռի թեկնածուի շուրջ հայկական համայնքում ծայր առած պայքարին։ Վերջինս տևեց մոտ հինգ տարի և քաղաքի հայությանը բաժանեց երկու մասի. մի կողմում զոր-

83 Նույն տեղում, ձեռ. № 7442, թ. 282ա։

84 Գ ր ի գ ո ր Դ ա ր ա ն ա գ ց ի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1915, էջ 11։

85 Նույն տեղում, էջ 12։

86 W. H e y d, Geschichte des Levantehandels un Mittelalter, Stuttgart, 1879, էջ 175։

87 Atti, t. VII, II, էջ 343։

ծում էր հայ առևտրա-վաշխառուական վերնախավի ամենից ավելի զորեղ և ջենովական պաշտոնեության ու առևտրական կապիտալի հետ կապված մասը, բանկիր Կութլուկ-բեյի որդի Կայարեսի գլխավորությամբ, իսկ մյուսում՝ քաղաքի աշխատավոր հայ զանգվածները։ Այսպիսով, եպիսկոպոսական աթոռի թեկնածուի առիթով ծայր առած հակամարտությունը ըստ էության սոցիալական էր։ Այդ պայքարին Կաֆայի գաղութային իշխանության ցույց տված միջամտությունը, որի մասին մենք վստահելի տեղեկությունների ենք հանդիպում հենց Կաֆայի բարձրաստիճան պաշտոնյաների՝ հյուպատոս Կարելայի և նրա հակառակորդ մասար[88] Սկվարչիաֆիկոյի այդ թվականներին Ջենովա ուղարկած իրարամերժ զեկուցագրերում[89], առավել խտացնում է հայ աշխատավորների դժգոհությունը լատինացիների հանդեպ։

Կաֆայի անկումը չի կարելի պատճառաբանել նաև տեղացի ազգաբնակչության, այդ թվում նաև հայերի, դեպի եկվոր ջենովացիներն ունեցած որոշակի հակակրանքով։ Որքան էլ մեծ չիներ դեպի ջենովացիները տածած հակակրանքը, այնուամենայնիվ թուրքական ահ ու սարսափի հանդեպ այն նսեմանում էր, որովհետև թուրքական տիրակալությունը նախ և առաջ նշանակում էր մահ և գերություն, ազգային և կրոնական լկում։ Ուրեմն ջենովացիների հանդեպ ունեցած որոշակի դժգոհությունը չէր կարող հայերին մղել դեպի թուրքական կողմնորոշում։ Տվյալ դեպքում ջենովացիները, իհարկե, չարիքներից փոքրագույնն էին։

Այնինչ դեպի ջենովացիները հայերի ունեցած դժգոհությունն ու հակակրանքը, ինչպես նշեցինք, որոշ հեղինակներ փորձել են դարձնել հիմք՝ Կաֆայի անկման պատճառը համարելու նաև մի քանի հայ մեծահարուստների դավաճանությունը։ Ռուսաստանի կաթոլիկների առաջնորդ Սեստրենցևիչ-Բոգուշը իր «Տավրիայի պատմությունը» գրքում, հակասելով պատմական իրողությանը, գրում է. «Բայց նոր զորքերի հրամանատար դարձավ հայ ժողովրդի գլխավորներից մեկը, ապա փաշան կարողացավ համոզել ցույց չտալ իսկական դիմադրություն, և շուտով նա հանձնվեց հաղթողի կամքին»[90]։ Նրան հետևելով, Վ. Խ. Կոնդորակին գրում է, թե թուրքերը Կաֆան գրավեցին երք օրվա ընթացքում, 8 հայ վաճառականների օգնությամբ։ Նրա ասելով՝ անձնատուր եղողը զորքերի հայազգի հրամանատարն էր[91]։ Առեղծված է մնում այն, թե հեղինակը ինչի հիման վրա է այդպիսի հայտարարություն անում։ Եթե նա նկատի ունի մեծահարուստ Կայարեսի նման Կաֆայի 8—10 այն հարուստներին ու դրամատերերին, որոնց մասին նշում էր հյուպատոս Կարելան 1475 թ. փետրվարի 12-ի իր նամակում, ապա դարձյալ հիմնավոր տարակուսանք է առաջացնում այն, թե ինչու հեղինակը նրանց դավաճանության մեջ է մեղադրում։ Չէ՞ որ հյուպատոսը պարզապես նշում էր, որ քաղաքում այդպիսի հարուստներ կան, առանց որևէ ակնարկ անելու նրանց թուրքասիրության մասին։ «Ժողովրդի մեծամասնությունը,—գրում էր հյուպատոսը,—Տեր Ոնանեսի (Տեր Հովհաննեսի—Վ. Մ.) կողմն է, և միայն հարուստների ու անհանգիստների

88 Մասարը ֆինանսական կառավարիչ էր, նա համարվում էր հյուպատոսի առաջին տեղակալը։

89 ИТУАК, № 55, էջ 147, 152, 163։

90 Сестренцевич-Богуш, История о Таврии, СПб., 1806, II, էջ 209—210։

91 В. Х. Кондораки, Универсальное описание Крыма, т. 3, ч. 9, 1875, էջ 37 և 66։

ինչ-որ մի դյուժին պաշտպանում է երկրորդին»[92]։ Կոնդորակիին հետևող հեղինակների այդ կարծիքը իրավացիորեն վիճարկում է 1848 թ. «Сын отечества»-ում տպագրված «Իտալացիների առևտուրը XIII—XIV դարերում» ուսումնասիրության անանուն հեղինակը։ Նա ընդգծում է, որ իտալական աղբյուրներում և ջենովական տարեգրություններում 8 հայ վաճառականների դավաճանության մասին ոչինչ չկա[93]։ Ն. Ն. Մուրզակևիչը հայտարարում է, թե Կաֆան թուրքերը գրավեցին մի քանի հայերի դավաճանությամբ. «Հունիսի 6-ին,—ասում է նա,—Կաֆայի կառավարությունը հանկարծ առաջարկում է քաղաքի անպայման հանձնում, հույս դնելով հաղթողի մեծահոգության վրա։ Այդ արարքի մեղավորներին համարում են Սկվարչրաֆիկոյին և մի քանի հայերի»[94]։ Նա ևս լռում է, թե ինչ աղբյուրներից է ինքն այդ տեղեկությունը քաղել։ Ակնհայտ է, որ երկուսն էլ անճիշտ եզրակացություններ են անում հայ եպիսկոպոսական աթոռի շուրջ ծագած վեճից և անհիմն կերպով նույնացնում վերոհիշյալ վեճը շահելու և քաղաքը թուրքերին հանձնելու բոլորովին այլ բովանդակություն ու խնդիրներ ունեցող միմյանցից տարբեր հարցերը։ Ն. Մուրզակևիչը անտեսում է, որ Կաֆայի կառավարությունը նախ և առաջ հյուպատոսն էր, և եթե նա ստիպված է եղել համաձայնվել թուրքերի առաջարկություններին, ապա դա, բնականաբար, թելադրվում էր ստեղծված իրադրությամբ։

Այսպիսով, շարադրվածից միանգամայն պարզ է դառնում, որ Կաֆա քաղաքի անկումը անմիջականորեն պայմանավորված էր սոցիալ-տնտեսական և արտաքին քաղաքական այն ծանր կացությամբ, որ ստեղծվել էր Ջենովայի սեծովյան գաղթավայրերի համար XV դարի կեսերին։

К ВОПРОСУ О ПАДЕНИИ ГОРОДА КАФЫ

В. А. МИКАЕЛЯН

(Резюме)

В июне 1475 г. турецкие войска с помощью крымских татар, после пятидневной осады и артиллерийской бомбардировки, заняли г. Кафу—оплот и центр генуэзских торговых колоний на Черном море.

Некоторые клерикально-феодальные и буржуазные историки, не вникая в сущность событий, происходивших в Европе и на Ближнем Востоке в связи с завоеваниями султана Магомеда II во второй половине XV в., неправильно объясняют причины падения Кафы. К числу этих авторов относятся итальянский историк XIX в. Канале, предводитель католической церкви в России в конце XVIII в. Сестренцевич Богуш, В. Х. Кондораки и др.

Анализ фактического материала показывает несостоятельность мнения этих авторов. В статье рассматриваются внутренние и международные факторы, обусловившие захват турками г. Кафы.

[92] ИТУАК, № 55, էջ 184։
[93] „Сын Отечества", 1848, кн. 10, էջ 68։
[94] Н. Мурзакевич, История генуэзских поселений в Крыму, էջ 79։